

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Էլքահիմ Սաֆարի

Գալեշների լեզուն

Ժ.02.06 –«ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանազիտություն)»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

**Գիտական դեկանական՝** բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

### **Պաշտոնական**

**ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Մ. Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Լ.Վ.Ղազարյան

### **Առաջատար**

**կազմակերպություն՝** Վ. Բրյուսովի անվ. պետական  
լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 15:00  
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գրքող ԲՈՀ-ի  
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում  
(հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր.  
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ նոյեմբերի 2-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,**  
բանասիրական գիտությունների թեկնածու՝

Ն. Ս. Սիմոնյան

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **1. Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Գրական ավանդույթից զորկ գիլաներենի բարբառների գրառումն ու ուսումնասիրումն այսօր իրանական բարբառագիտության առջև ծառացած կարևոր խնդիրներից է: Գալեշների լեզվի՝ որպես գիլաներենի բարբառներից մեզի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մերձկասպյան լեզուների ու բարբառների վերաբերյալ հետազոտություններն ամբողջացնելու և բարբառների գիտական դասակարգում կատարելու կարևորությամբ: Իրանական բարբառագիտության ոլորտ մինչ այժմ ներմուծված լեզվանյութում բացակայում է գիլաներենի և նրա բարբառների համապարփակ նկարագիրը, ինչպես նաև այդ բարբառների համեմատական բնութագիրը: Ըստ այդմ, այս համատեքսում գալեշների լեզվի ուսումնասիրությունը հենց վերոհիշյալ խնդիրներն առաջ քաշելու, հետազոտելու և կնճռու հարցերի վրա լրիս սփռելու միտում ունի: Գալեշի բարբառի գրանցումն ու հետազոտումը արդիական է թե՝ իրանական լեզվաբանության և թե՝ մերձկասպյան լեզվամիությանը պատկանող լեզուների ու բարբառների, մասնավորապես՝ գիլաներենի բարբառների պատմահամեմատական քննության առումով:

### **2. Ատենախոսության հետազոտության առարկան**

Աշխատանքի հետազոտության առարկան գալեշների լեզուն է: Գալեշների լեզուն կամ *գալեշին* գիլաներենի բարբառներից է, որով խոսում է Գիլանի և Մազանդարանի լեռնային շրջաններում բնակվող, *գալեշ* անվանումը կրող լեռոտցիալական ենթախումբը: Այդ բարբառն ընդգրկում է Գիլանի Սեֆիրուդ գետի աջ ափից մինչև Մազանդարանի ամենաարևելյան կետն ընկած տարածքները, այդ թվում՝ Ամլաշ շահրեստանը, Սիահքոլ շահրեստանի Դելեման գավառի ողջ տարածքը՝ ձգվելով մինչև Մազանդարան նահանգի Ռամսար շահրեստանի Թոնեքարոնի մերձակա շրջանները:

*Gâleș* եզրը մերձկասպյան բարբառներում բառացի նշանակում է *խոշոր անասունների հոլիվ*, նախրապան, որով Մազանդարանի և Գիլանի տարածքներում անվանվում են խաշնարածական տնտեսություն վարող հանրույթները, որոնք իրենց կենցաղատնեսական կացութաձևով գիլանական, ինչպես նաև մազանդարանական ազգաբնակչության առանձին

Ենթախումք են ձևավորել, որին զուգընթաց աստիճանաբար վերջիններիս լեզուն ձեռք է բերել առանձին բարբառի կարգավիճակ:

Սույն ատենախոսությունը մասնավորապես վերաբերում է Գիլան նահանգի Ռուդբար շահրեստանի արևելյան լեռնային շրջանում գտնվող Ռահիմաբարդ գավառի Էշքեվարաթ դեհեստանում խոսվող գալեշի բարբառի համաժամանակյա ու պատմահամեմատական քննությանը:

### **3. Աշխատանքի նպատակն ու խնդիրները**

Սույն ատենախոսության նպատակն է դաշտային նյութերի հիման վրա իրականացնել գալեշի բարբառի համաժամանակյա և, մասսամբ, տարածամանակյա քննություն: Լեզվաբանական մեթոդների կիրառմամբ նպատակ է դրվել որոշարկելու այս բարբառի տեղը գիլաններենի բարբառների համակարգում: Այս նպատակն իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ առաջադիր խնդիրները.

- գրանցել ու ներկայացնել ողջ բարբառային նյութը,
- առկա լեզվանյութը ենթարկել հնյունարաննական ու քերականական համաժամանակյա և տարածամանակյա քննության,
- դիտարկել գալեշերենը հարևան լեզուների ու բարբառների հետ համեմատական համատեքստում
- իրականացնել գալեշի բարբառի ու հարակից բարբառների ու լեզուների, մասսամբ նաև՝ պարսկերենի հնյունական ու քերականական համակարգերի համեմատական քննություն,
- վեր հանել բնիկ բառապաշտարային ու քերականական ձևերը,
- ներկայացնել գալեշերենի հիմնական բառացուցակն ու տեքստային նմուշներ:

### **4. Աշխատանքի գիտական նորույթը**

Հետազոտության գիտական նորույթը այն է, որ առաջին անգամ ամբողջությամբ հավաքագրվել ու ներկայացվել է իրանական բարբառագիտությանն անծանոթ գալեշերենի լեզվական նյութը, որի հնյունական ու քերականական վերլուծությունն օգնել է դասակարգելու այն գիլաններենի արևելյան բարբառաձյուղի մեջ:

Գիլաններենի մյուս բարբառների հետ համեմատական քննության արդյունքում պարզվել է գալեշերենի բնիկ բառամիավորների շերտը, փորձ է արվել դիտարկելու այն ստուգաբանության տեսակետից, ինչպես նաև տրվել են դրանց զուգաբանությունները հարևան բարբառներում:

Առաջին անգամ ներկայացվել է բարբառի հիմնական բառապաշտի համեմատաբար ամբողջական ցանկը:

## **5. Աշխատանքի կիրառական նշանակությունը**

Աշխատանքի արդյունքներն իրենց գործնական դերով ու արժևորմամբ կամրագրվեն իրանական բարբառագիտության խնդիրների լուծման ասպարեզում և մերձկասպյան բարբառների համայնապատկերի լուսաբանման ոլորտում: Ինչպես նաև սույն ատենախոսության նյութը կարող է իրանական բարբառագիտության դասընթացի բաղադրիչ մաս լինել:

Աշխատանքի տեսական նշանակությունն իր դրսեորումը կստանա իրանական բարբառագիտության տեսական մեթոդաբանության մեջ՝ կոնկրետ բարբառային նյութի վրա ունեցած կիրառական արդյունավետությամբ:

## **6. Աշխատանքի մեթոդաբանական հիմքը**

Ատենախոսության մեջ առաջ քաշված խնդիրներն իրենց համապատասխան լուծումներն են ստացել լեզվաբանական մի քանի մեթոդների ի մոտո կիրառմամբ: Զուգահեռաբար գործածվել են պատմահամեմատական, համեմատական-զուգադրական և նկարագրական մեթոդները. արդյունքում նկարագրվել են գալեշերենի քերականական, ինչպես նաև հնյունական առանձնահատկությունները՝ համաժամանակյա և տարածամանակյա լեզվաբանական վերլուծության տեսանկյուններից: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ պարզաբանվել են նաև գիլաներենի բարբառների ցեղակցության հարցը, վերջըններիս՝ իրար հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

## **7. Ատենախոսության փորձաքննությունը**

Աշխատանքի մի շարք հիմնախնդիրներ ու դրույթներ լուսաբանվել են հանրապետական գիտական «Orentalia», «Արևելագիտության հարցեր» ժողովածուների և «Դրան-նամէ» հանդեսի էջերում հեղինակի հրատարակած հոդվածներում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը:

## **8. Սկզբնադրյուրների և գրականության համառոտ տեսություն**

Ատենախոսության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն աշխատություններ և

ուսումնասիրություններ, որոնք առնչվում են գիլաներենին և նրա բարբառներին, մասնավորապես՝ գալեշերենին: Աշխատել ենք անդրադարնալ գիլաներենին վերաբերող նույնիսկ ամենաառաջին և կցկուոր տեղեկություններ պարունակող հետազոտություններին: Հաշվի առնելով առաջ քաշված խնդիրները և ելնելով աշխատանքի բնույթից՝ առանձնակի տեղ է հատկացվել դաշտային աշխատանքների արդյունքներին, ինչպես նաև հաշվի է առնվել գիլաներենի բարբառներն ընդգրկող բառարանների լեզվանյութը:

## **9. Ատենախոսության կառուցվածքն ու բռվանդակությունը**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, թվագրված ենթաբաժիններից կազմված երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությանը կից ներկայացված է հավելված, որն ընդգրկում է գալեշերեն-հայերեն բառացուցակ, ինչպես նաև պատառիկներ դաշտային կյութերից:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածությունը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ Ընդհանուր նկատառումներ, Գալեշները և գալեշների լեզվի տեղը գիլաներենի բարբառային համակարգում, Գիլաներենի բարբառների հնչյունական զարգացումները և բառապաշտը, Գալեշերենի ուսումնասիրության պատմությունը և առկա գրականության տեսությունը:

**Ըստիանուր նկատառումներ** ենթաբաժնում ներկայացված են հետազոտության օբյեկտը, աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, հիմնավորված են ատենախոսության թեմայի արդիականությունն ու կարևորությունը:

**Երկրորդ ենթաբաժինը** նվիրված է գալեշներին և նրանց լեզվին, որտեղ նախ՝ մանրակրկիտ ներկայացվում է վերջիններիս բնակության ներկայիս սահմաններն ու տարածքը, ապա՝ որոշարկվում նրանց լեզվի տեղը գիլաներենի բարբառային համակարգում:

**Գալեշ** անվանումով է կրչվում մերձկասպյան լեռնալանջերին ապրող այն սուր-էթնիկական խումբը, որը զբաղվում է անասնապահությամբ, մասնավորապես՝ խոշոր եղշերավոր անասուններ պահելով:

Այս էթնոսոցիալական խմբի բնակության հիմնական աշխարհագրական տեղանքն ընդգրկում են հյուսիսից՝ Գիլանի, Մազանդարանի և Գորգանի լեռնային շրջանները, իսկ հարավից՝ Էլբուրս լեռնաշղթայի բարձրադիր լանջերը:

Աշխատանքում ներկայացված ամբողջ լեզվական նյութը հավաքվել է Գիլանի հարավարևելյան շրջանում՝ Ռահիմարասդ գավառի՝ Էշքեվարար դեհետանում, որը ներկայացնում է տեղի գալեշի բարբառը՝ գիլաներենի մյուս բարբառների հետ համեմատական համատեքստում:

Լեռնային ընդարձակ Էշքեվար դեհետանն իր 162 գյուղերով անվանվում է Էշքեվարար, որը հյուսիսից սահմանակից է Ռահիմարասդի և Ռամսարի լեռնային շրջաններին, արևմուտքից՝ Ռուդքար և Ամլաշ շահրեստաններին, արևելքից՝ Մազանդարան նահանգի Ռամսար շահրեստանի Թոնեքարոն գավառին, իսկ հարավից հարում է Ղազվին նահանգին: Էշքեվարարը մտնում է Ռահիմարադ գավառի մեջ, որը գրադեցնում է կ 804, 615 կմ<sup>2</sup> տարածք, իսկ Էշքեվարարը գրավում է կ 258, 724 կմ<sup>2</sup> տարածք:

Առանձին ենթավերնագրով հակիրճ տրվում են գիլաներենի՝ որպես հյուսիսարևմտյան իրանական լեզվի նկարագիրը, նրա տարածվածության սահմաններն ու ենթարբառները: Ըստ ընդունված բաժանման՝ գիլաներենի բարբառները որոշարկվում են երկու հիմնական բարբառախմբերում՝ արևելյան և արևմտյան:

Այսպիսով՝ գալեշների լեզուն կամ գալեշին գիլաքի բարբառերից է, որով խոսում է Գիլանի և Մազանդարանի լեռնային շրջաններում բնակող՝ գալեշ անվանումը կրող էթնոսոցիալական ենթախումբը:

Այնուհետև քննական վերլուծության է ենթարկվում *հնչյունական հերթագայությունը* գիլաներենի բարբառներում: Ցույց են տրվում պարսկերենի և հարավարևմտյան ճյուղի լեզուների ուժեղ ազդեցության հետևանքով գիլաներենում տեղ գտած այն հնչյունական փոփոխությունները, որոնք բնորոշ են հարավիրանական լեզուներին:

Այս ենթարաժնում հակիրճ տրվում են նաև գալեշերենի բառապաշտի հիմնական ուրվագծերը: Ենթարաժինն ավարտվում է գալեշերենի ուսումնասիրության պատմության և առկա գրականության տեսության ներկայացմամբ:

**ԳԼՈՒԽ 1**  
**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Այս գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Ներկայացվում է զալեշերենի հնչյունական համակարգը համաժամանակյա կտրվածքով, իսկ բաղաձայնները դիտարկվել են պատմական զարգացման տեսանկյունից:

Ձեռք բերած նյութը թույլ է տալիս զալեշերենում դիտարկել 7 ձայնավոր, որոնք ներկայանում են հետևյալ տեսքով.

|                   |                    | Ստորին<br>բարձրացում | Միջին<br>բարձրացում | Վերին<br>բարձրացում |
|-------------------|--------------------|----------------------|---------------------|---------------------|
| Առաջնային<br>շարք | Ոչ<br>շրթնայնացած  |                      | e /փակ/             | i /փակ/             |
| Միջին<br>շարք     | Ոչ<br>շրթնայնացած  | a /քաց/              | ə /քաց/             |                     |
| Հետին<br>շարք     | Շրթնայնացած        |                      | o /փակ/             | u /փակ/             |
|                   | Քիչ<br>շրթնայնացած |                      | â /քաց/             |                     |

**Աղյուսակ 1. Գալեշի բարբառի ձայնակորները**

Գալեշերենում, ինչպես նաև գիլաներենի մյուս բարբառներում, ձայնավորները միմյանց չեն հակադրվում ըստ կայունություն-ոչ կայունություն առանձնահատկության: Էական են համարվում նրանց միայն որպակական տարբերությունները:

Գալեշերենի բարբառում վկայված են երկու երկինշյուններ՝ **օս** և **ey**, որոնք համապատասխանում են պարսկերենի երկինշյուններին:

Բաղաձայնական համակարգի առումով զալեշի բարբառը չի տարբերվում պարսկերենից: Այսպիսով, բարբառում կարելի է տարբերակել 22 բաղաձայն: Բարբառի բաղաձայններն են՝ b, p, f, g, k, x, h, γ, d, t, j, և, z, s, լ, հ, m, n, r, l, v, y:

|             | Դարձ       |         |           |        | Բարդ     |        |          |        |
|-------------|------------|---------|-----------|--------|----------|--------|----------|--------|
|             | Շփական     |         |           |        | Պայթական |        | Հպաշփ.   |        |
|             | Զայնորդներ |         |           |        |          |        |          |        |
|             | գնդին      | գնաւուն | գնայնային | լանգին | լանգին   | լանգին | լանգին   | լանգին |
| Երկշրթնային | <b>m</b>   |         |           |        | b        |        | <b>p</b> |        |

|                |   |   |   |      |      |   |        |   |   |   |
|----------------|---|---|---|------|------|---|--------|---|---|---|
| Շրթնատամնային  |   |   |   | v    | f    |   |        |   |   |   |
| Առաջնալեզվային | n | r | l | z, ž | s, š | d |        | t | j | и |
| Միջնալեզվային  |   |   | y |      |      |   |        |   |   |   |
| Ետնալեզվային   |   |   |   |      |      | g |        | k |   |   |
| Ուվույար       |   |   |   | γ    | x    |   |        |   |   |   |
| Կոկորդային     |   |   |   |      |      |   | (՛), h |   |   |   |

## Աղյուսակ 2. Գալեշերենի բաղաձայնները

Գալեշերենի շեշտը իմաստատարքերակիշ առանձնահատկություն ունի, այսինքն՝ շեշտի տեղափոխությունը բառիմաստի փոփոխություն է առաջացնում:

### ԳԼՈՒԽ 2 ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկա զիյում քննության է ենթարկվում գալեշերենի ձևաբանությունը: Յուրաքանչյուր խոսքի մաս քննարկվում է համաժամանակյա կտրվածքով:

Գալեշերենին, ինչպես նոր արևմտահրանական լեզուների և բարբառների մի մասին, հատուկ է գոյականի երկիրով (ուրիղ-թեք հոլովներ) համակարգը:

Գալեշերենը, ի տարբերություն հյուսիսարևմտյան իրանական մի շարք լեզուների, պարսկերենի ազդեցությամբ, ինչպես նաև ներքին օրինաչափ զարգացումների հետևանքով լիովին կորցրել է սերի քերականական կարգը:

Ուսումնասիրության առարկա բարբառում տարբերակվում է գոյականի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Գալեշերենի հոգնակիի վերջավորությունն է -ոռ-ը, ինչպես՝ կերկ-կերկոն «Ճուտիկ-Ճուտիկներ»

Սակայն հարկ է նշել, որ գալեշի բարբառում -ոռ վերջածանցը հիմնականում կիրառվում է սերտաճած չ բաղաձայնի հետ, ինչպես՝ **-քոն**: Օրինակ՝ խան «սոուն», խանեքոն «տներ», վան «տղա», վանեքոն «տղաներ»: Ի դեպ, բաղաձայնով վերջացող գոյականների դեպքում հոգնակիության ձևույթից առաջ բարեհնշունության համար ավելանում է թ ձայնավորը, ինչպես՝ das «ձեռք» dasեքոն «ձեռքեր», gusund «ոչխար», gusundեքոն «ոչխարներ»:

Գալեշերենում հոգնակի թիվ կազմության համար կիրառվում է նաև **-առ** հոգնակիակերտ մասնիկը /k/ բաղաձայնի հետ միացած՝ **-կառ**, ինչպես՝ վանեքան «տղաներ»:

Գալեշի բարբառում վկայված է երկու հոլով՝ ուղիղ կամ ուղղական և թեք: Թեք հոլովը պայմանականորեն կարելի է բնորոշել որպես երկու տեսակ հարաբերությունների արտահայտում՝ ա) հայցական-տրական և բ) սեռական: Ուղղական հոլովը կազմվում է եզակի կամ հոգնակի թվի հիմքերով, իսկ թեք հոլովները՝ հիմքերին միացող հոլովացուցիչով:

Թեք հոլովը գալեշի բարբառում կիրառվում է, եթե այն հանդես է գալիս.

ա) հատկացուցային կառույցներում, բ) հետդիրների հետ, զ) որպես ուղիղ և անուղղակի խնդիրներ:

Մնացյալ բոլոր դեպքերում կիրառվում է գոյականի ուղիղ հոլովը: Այսպիսով, գալեշերենում տարբերակելի է երեք հոլովաձևն, որոնք պայմանականորեն կարելի է ներկայացնել որպես ա) ուղիղ՝ ուղղական և երկու թեք՝ բ) սեռական և զ) տրական-հայցական:

Որպես անորոշ/միակուրժյան հոդ է հանդես գալիս **յԹ** «մեկ, մի» թվականը, որն այս կիրառության ժամանակ որոշ չափով կորցնում է իր բառային արժեքը և հանդես է գալիս որպես անորոշության ցուցիչ ու նախադաս է գոյականին, օր.՝ յԹ kitâb «մի զիրք», «խնչ-որ զիրք»: Անորոշ առումը կազմվում է նաև ետադաս, կցական բնույթ կրող և մշտապես անշեշտ անորոշ-միակուրժյան -i ցուցիչով, որը փոխառված է պարսկերենից: Օրինակ՝ kitâb-i «մի զիրք»

Գալեշի բարբառում որակական ածականը նախադաս է գոյականին, ինչպես զաշանգ կերկ «գեղեցիկ թոշուն»: Ածականի բաղդատական աստիճանի ձևաբանական ցուցիչն է շեշտակիր -te վերջածանցը, որն ավելանում է դրականին, ինչպես՝ յենâն «երիտասարդ», յենâնտ «ավելի երիտասարդ»: Ածականի գերադարական աստիճանը գալեշերենում արտահայտվում է վերլուծական և ձևաբանական ձևերով.

ա) վերլուծական, որի դեպքում համեմատական աստիճանով դրված ածականը կիրառվում է hamə ji «բոլորից» կապակցության հետ, ընդ որում՝ ետադաս է վերջինիս, օր.՝ hamə ji յենâնտ «ամենաերիտասարդ»

բ) ձևաբանական, որը կազմվում է դրական աստիճանին ավելացնելով – terin վերջածանցը, ինչպես՝ kušterin «ամենափոքր»:

Հարաբերական ածականները կազմվում են հետևյալ ածանցներով՝ -i, -in, -ni: Առաջին երկուսը իրանական ծագման են և հավանաբար փոխառվել են պարսկերենից, իսկ երրորդը՝ թուրքական՝ փոխառված պարսկերենի միջնորդավորմամբ, օրինակ՝ տաս-ի բայրական՝ «փայտե պատուհան»: Նշենք, որ -i վերջածանցը գալեշերենում հաճախ փոխարինվում է ե-ով, ինչպես՝ բաշտ-ե jurâb «բրդյա գուլպա»:

Գալեշերենի քանակական թվականները գրեթե ամբողջությամբ համընկնում են պարսկերենի քանակական թվականների հետ, դրանցից տարբերվում են միայն որոշ հնչյունական առանձնահատկություններով, որոնք միանշանակ ուշ շրջանի փոփոխություններ են, ինչպես՝ 3 – պարսկ. se, qəz. so, 9- պարսկ. noh, qəz. po: Կազմության առումով առաջին տասնյակի քանակական թվականները պարզ են՝ կազմված զուտ մեկ արմատից կամ հիմնական ձևույթից: Հիմնականում այդպիսիք են միավորները (1-ից-9-ը), տասնավորներից՝ տասն ու քսանը, բարձր թվերից՝ հարյուրը, հազարը

Երկրորդ տասնյակի (11–19) թվականները պատմականորեն երկու ձևույթից բաղադրված թվականներ են, որոնք, սակայն, նոր իրանական բոլոր լեզուներում համաժամանակյա կտրվածքով արդեն դիտարկվում են որպես անբաժանելի միավորներ: Հատկապես -z- տարրի առկայությունը երկրորդ տասնյակի թվականներում միանշանակ փաստում է վերջիններիս պարսկական ծագումը, քանի որ անմիջական հին նախատիպից զարգացման դեպքում z-ի փոխարեն կլիներ յ կամ չ:

Գալեշի բարբառում տարբերակվում են դերանունների հետևյալ տիպերը՝ անձնական, ցուցական, ստացական, անդրադարձ, հարցական, ժխտական, որոշյալ և անորոշ:

Գալեշի բարբառում անձնական դերանունները հիմնականում հանդես են զայխ երկու՝ ուղիղ և թեք, ձևերով: Այսու բոլոր ձևերը կազմվում են դրանցից մեկի կամ մյուսի հիմքի վրա՝ ածանցների և ետղիրի հավելմամբ: Ներկայացվող այյուսակը ներկայացնում է անձնական դերանունների ուղիղ և թեք ձևերը:

| եզ.   | ուղիղ     | թեք         | I       | II        | ստացական  |
|-------|-----------|-------------|---------|-----------|-----------|
| 2     | mo        | mə/mi       | mə-rə   | mə -ji    | mi-ši     |
| 3     | to        | tə/ti       | tə-rə   | tə -ji    | ti-ši     |
| hq. 1 | amə       | ámə/ami     | amə-rə  | ám(ə)-ji  | ámi-ši    |
| 2     | šəmə      | šəmə/šimi   | šəmə-rə | šəm(ə)-ji | šimi-ši   |
| 3     | išan/ošan | išanə/ošanə | ošan-ə  | ošanə -ji | ošanə- ši |

### Աղյուսակ 3. Գալեշերենի անձնական դերանունները

Անձնական դերանվան -ə մասնիկով վերջացող թեք ձևերը բաղկացած են ուղիղ ձևից և թեք հոլովի -ə վերջավորությունից: Թեք ձևերի գործառույթներն են. ա) հատկացուցային կառույց կազմելը. Օռ հանդիպությունը մեծ է», բ) կիրառությունը հետղիրի հետ. Մօ օշանը hamra շօնեմ «Ես նրանց հետ զնում եմ»:

Անձնական դերանվան *-i* մասնիկով թեք ձևերը նշում են պատկանելություն և *ši* վերջածանցի միջոցով ձևավորում են ստացական անձնական դերանուն:

Հայցական-տրական հոլովի *-ərə* ետղիր-ցուցիչը միանում է անձնական դերանվան ոչ թե հիմքին՝ ուղիղ ձևին, այլ թեք ձևին՝ սեռական հոլովին, որն այս բարբառում առավել ես, քան այլ լեզուներում ու բարբառներում որպես ընդհանուր թեք հոլով հարատևել է ավելի երկար:

Ցուցական դերանունները հանդես են զայիս որպես պարզ և սաստկական տարրերակներ, վերջիններս գալեշի բարբառում վկայված են *հ-*տառի հետ սերտաճած: Սաստկական *hin* «հենց այս», *hon* «հենց այն» դերանունները, հնարավոր է, ավելի ուշ փոխառություններ են:

Բարբառում վկայված են հետևյալ հարցական դերանունները.

|      |            |       |              |
|------|------------|-------|--------------|
| ki   | n̥’q       | kujə  | n̥runt̥’n̥   |
| u i  | h̥’n̥z     | kemin | n̥r̥t̥r̥r̥t̥ |
| ke:  | t̥’pp      | uendi | h̥n̥spx̥’n̥  |
| uera | h̥n̥z̥n̥t̥ |       |              |

#### Աղյուսակ 4. Գալեշերենի հարցական դերանունները

Գալեշի բարբառում հիմնականում գործածական է հետղիրային բավական զարգացած համակարգը:

Գիլաներենի *-re*, գալեշերենի *-rə* /-ə/ հետղիրը հանգում է ավելի վաղ *\*-ra* հետղիրին և իրականում օժտված է հենց նույն՝ հայցական-տրական հոլովների ցուցի կիրառություններով, ինչ վաղ *\*-ra* և *\*-(r)a*, սակայն՝ առավել սահմանափակ հնարավորություններով:

Գալեշի բարբառում *-ji* (գիլաներենում *-ja*) հետղիրը հանգում է հին իրանական *\*հասա* (հմմտ. h.պ. հաս, ավ. հաս, հասա) նախղիրին և հիմնականում գործածվում է բացառման, անջատման, բաժանման նույն նշանակություններով, ինչ և պարսկերենից փոխառյալ աշ նախղիրը: Մեծ մասսամբ հետղիրներից առաջ դրվող բառը օգտագործվում է թեք հոլովով:

Իմաստաբանական հիմունքով, որը և պայմանավորում է համապատասխան կիրառական պլան, գալեշերենում կարելի է տարրերակել ժամանակի, տեղի, ձևի, չափ ու քանակի մակրայներ:

Գալեշի բարբառն օժտված է բավականին հարուստ բայական համակարգով: Նրա խոնարհման հարացույցը մյուս իրանական լեզուների և բարբառների նման դրսուրվում է սահմանական, իրամայական և ստորադասական եղանակների ժամանակաձևերով: Բայի ժամանակային հակադրությունը հիմնված է ներկա-անցյալ հիմքերի հակադրության վրա:

Գալեշերենում տարբերակվում է դիմային վերջավորությունների չորս խումբ: Առաջին խումբը օգտագործվում է սահմանական եղանակի ներկապառնիի, երկրորդը՝ ստորադասական եղանակի ներկա-ապառնի և անցյալ ենթադրական ժամանակաձևերի, երրորդը՝ անցյալ անկատարի և անցյալ վաղակատարի հետ, չորրորդը՝ անցյալ կատարյալի հետ:

| Թիվ        | Դեմք | Դիմորոշավորությունների տեսակները |          |           |          |
|------------|------|----------------------------------|----------|-----------|----------|
|            |      | I խումբ                          | II խումբ | III խումբ | IV խումբ |
| Եզ.<br>թ.  | 1.   | -əm                              | -əm      | -im (i)   | -am(i)   |
|            | 2.   | -e                               | -i       | -i        | -e       |
|            | 3.   | -ə                               | - e      | -i        | -a       |
| Հզն.<br>թ. | 1.   | -im(i)                           | -im(i)   | -im (i)   | -e:m(i)  |
|            | 2.   | -in(i)                           | -in(i)   | -in       | -e:n(i)  |
|            | 3.   | -ən(i)                           | -ən(i)   | -in       | -an(i)   |

#### Աղյուսակ 5. Գալեշերենի բայի դիմային վերջավորությունները

Գալեշերենի բայի կրավորական սեռը թէ՝ կառուցվածքային և թէ՝ գործառույթային առումով նույնական է պարսկերենի կրավորականի հետ:

Բարբառում վկայված են անորոշ, անցյալ և ներկա ժամանակների դերբայները, որոնցից հատկապես ներկայի դերբայը հիմնականում հանդես է գալիս գոյականարար:

Գալեշի բարբառում կիրառական են հետևյալ համադաս շաղկապները. ա/ միավորիչ՝ օ «և, ու», va «և, ու», ham «նաև», vali «բայց»; թ/ միավորիչ-հավելական՝ ham...ham «էլ... էլ, և՛...և՛», na...na «ո՛չ...ո՛չ; զ/ տրոհական-բաժանական՝ յա «կամ», յա ... յա «կամ ... կամ»: Կախյալ հարաբերություններ արտահայտվում են հետևյալ ստորադասական շաղկապներով՝ տâ «որ, երբ, որովհետև», ovaxt «երբ», պայմանական՝ ացեր «եթե և այն»:

### ԳԼՈՒԽ 3 ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գիյում ներկայացված է գալեշի բարբառի բաղաձայնական համակարգի վերլուծությունը, ներկայացված են իրանական – գալեշի բարբառի բաղաձայնական համակարգերի հնչյունական համապատասխանությունները.

Արևմտահարանական բարբառների մեծ մասի նման գալեշի բարբառի հնչյունական համակարգը հիմնականում բաղաձայնների ոլորտում

հավաստի և կարևոր պատմական զարգացումներ է դրսենորում: Զայնավորները մեծ մասամբ ենթարկվում են այն հիմնական օրինաչափություններին, որոնք հատուկ են գրեթե ողջ արևմտահրանական բարբառային գոտուն,

Գալեշի բարբառի բաղաձայնական համակարգի պատմահամեմատական մանրակրկիտ ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ չնայած այս լեզվի հյուսիսարևմտյան իրանական բարբառախմբին պատկանելու հանգամանքին՝ այն պահպանում է հարավարևմտյան իրանական (պարսկական) բարբառներին բնորոշ նշանակալից առանձնահատկություններ:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով գալեշի բարբառին նվիրված ատենախոսության մեջ առաջարրված խնդիրները և ի մի բերելով հիմնական եզրահանգումները, հարկ ենք համարում նշել, որ՝

1. Գալեշի բարբառի գրանցումն ու հետազոտությունը լուրջ նպաստ է ոչ միայն գիլաներենի, այլև ամբողջ իրանական բարբառազիտության կայացման գործին: Կասպիական լեզվամիությանը հարող գիլաներենի նկարագրությունը թեպետ սկզբել է դեռ իրանական լեզվաբանության զարգացման սկզբնական փուլում, սակայն պետք է նշել, որ մինչ այժմ ամբողջական չեն վերջինիս բոլոր կարևոր բարբառների համապարփակ նկարագիրն ու պատկերը:

2. Գիլանի հարավում տեղակայված Էշքեվարաթ դեհեստանի գալեշի բարբառի նյութի հիման վրա կատարված ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ թեպետ նշված բարբառը պատկանում է հյուսիսարևմտյան իրանական բարբառախմբին, այնուամենայնիվ այն պահպանում է հարավարևմտյան (պարսկական) բարբառներին բնորոշ նշանակալից առանձնահատկություններ: Հարավարևմտյան իրանական լեզուներին հատուկ մի շարք հնյունական զարգացումները, մասնավորապես՝ \*-rd- > -l- անցումը մեկ անգամ ևս ապացուցում են, որ գալեշերենը «կասպիական» մյուս բարբառների նման ձևավորվել է՝ անցնելով հարավարևմտյան իրանական բարբառների հետ սերտ շփումների փուլով:

3. Գալեշին գիլաներենի բարբառերից է, որով խոսում է Գիլանի և Մազանդարանի լեռնային շրջաններում ու անտառներում բնակվող՝ գալեշ անվանումը կրող էրն-սոցիալական ենթախումբը, որը զբաղվում է անասնապահությամբ՝ մասնավորապես խոշոր եղջերավոր անասուններ պահելով:

Գալեշին իր ձևաբանական ու հնչյունական հատկանիշներով ուրույն տեղ է զբաղեցնում զիլաներենի բարբառների համակարգում, որն ընդունված է բաժանել երկու հիմնական՝ արևելյան և արևմտյան, բարբառախմբերի: Չնայած առկա որոշակի տարբերություններին՝ բարբառն իր օրինաչափ պատմական զարգացման հետևանքով որոշարկվում է արևելյան բարբառախմբում՝ Լահիջանի, Լանգեռուղի և մերձակա այլ շրջանների բարբառների կողքին:

4. Գալեշի բարբառի ձևաբանական և շարահյուսական հիմնական առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ բարբառը ևս, զիլաներենի ու նրա մյուս բարբառների նման, պահպանելով հանդերձ իրեն բնորոշ քերականական հատկանիշները, ոչ միայն զերծ չի մնացել պարսկերենի ազդեցությունից, այլև հակառակը, կրել է վերջինիս մեծ ազդեցությունը:

5. Գալեշի բարբառի ձայնավորական համակարգը ժամանակակից պարսկերենի ձայնավորներից (6 ձայնավոր) տարբերվում է միայն հավելյալ մեկ ձայնավորի (7 ձայնավոր) առկայությամբ: Որոշ հետազոտողների կողմից տարբերակվում են նաև *š* և *č* երկար ձայնավորներ՝ որպես վերապրուկային հնչույթներ, սակայն հարկ է նշել, որ ժամանակակից էտապում վերջիններս արդեն համապատասխանաբար փոխարկվել են *i* և *u* կարճ ձայնավորների: Իրականում, ձայնի տևողության տարբերակումը կորել է երկու՝ ժառանգված և փոխառված բառերում, որի հետևանքով նման միահյուսումը հաճախ ներառում է տվյալ բարբառի գրույրը չունեցող ձայնավորները նույնպես:

6. Բաղաձայնական համակարգի առումով գալեշի բարբառը գրեթե չի տարբերվում պարսկերենից՝ բացի **q** բաղաձայնից, որն արտասանվում է միայն որպես ետնաքմային ձայնեղ շփական [y]: Խուլ զ բաղաձայնը հանդիպում է հիմնականում արաբերենից փոխառյալ բառերում, մինչդեռ բուն բարբառային ձևերում վկայված է միայն ձայնեղ γ-ն, որն էլ հիմնականում փոխարինում է զ-ին նաև փոխառություններում՝ յաճաճական գաճաճական կապա: Այսպիսով, բարբառում կարելի է տարբերակել 22 բաղաձայն:

7. Գալեշի բարբառում գոյականը նոր իրանական լեզուների մեծ մասի նման տարբերակում է երկու թիվ՝ հոգնակի և եզակի, բնորոշվում է նաև անորոշության-որոշյալության առումներով: Գալեշի բարբառը, ի տարբերություն պարսկերենի, պահպանում է նաև ուղիղ և թեք հոլովների քերականական կարգը, որով և մերձենում է «կասայան» մյուս լեզուներին: Հյուսիսարևմտյան իրանական մի շարք լեզուների և բարբառների նման այն կորցրել է սեղի (իզական և արական) քերականական կարգը:

8. Որոշիչն ու հատկացուցիչը, ի հակառակ պարսկերենի, նախադաս են, իսկ որոշիչ-որոշյալ հատկացուցիչ-հատկացյալ կապն արտահայտվում է ոչ թե «փափետով», այլ մյուս հյուսիսարևմտյան իրանական լեզուներին բնորոշ թեք հոլովի միջոցով:

9. Գալեշի բարբառը գիլաներենի և հարևան մազանդարաներենի նման ևս լիովին կորցրել է էրգատիվ կառուցքը, որը բնորոշ է հյուսիսարևմտյան իրանական բարբառներին: Կարելի է ենթադրել, որ այն, ամենայն հավանականությամբ, պարսկերենի ազդեցության արդյունք է:

10. Գալեշի բարբառում որպական ածականը, ի հակադրություն պարսկերենի, ինչպես նաև մի շարք այլ իրանական լեզուների, նախադաս է գոյականին, պարսկերենի ազդեցությամբ տարբերակվում են համեմատության երեք աստիճանները, բաղդատականն ու գերադրականը՝ համապատասխանաբար կազմված՝ -te, -terin վերջածանցներով, սակայն հարկ է նշել, որ սովորաբար գերադրականի իմաստն արտահայտվում է նաև վերլուծական ձևով՝ համեմատական աստիճանին ավելացնելով *hamər je «բոլորից»* վերլուծական ձևը: Խնդրո առարկա բարբառում ածականը զուրկ է թվի քերականական կարգից:

11. Թվականները մոտ են պարսկերենի համապատասխան թվականներին և մեծ մասամբ, եթե ոչ ամբողջովին, կա՛մ պարսկական փոխառություններ են, կա՛մ էլ դրանց հետ բաղարկության արդյունք: Գալեշերենի քանակական թվականները գրեթե ամբողջությամբ համընկնում են պարսկերենի քանակական թվականների հետ, դրանցից տարբերվում են միայն որոշ հնչյունական առանձնահատկություններով, որոնք միանշանակ ուշ շրջանի փոփոխություններ են; Կազմությամբ առաջին տասնյակի թվականները պարզ են, երկրորդ տասնյակը կազմող (11-19) թվականները պարսկերենի նման ձևափորվում են նախադաս միավորից և ետադաս տասնավորից կազմված բարդությունների տեսքով: Հատկապես -z- տարրի առկայությունը երկրորդ տասնյակի թվականներում, միանշանակ փաստում է վերջիններիս պարսկական ծագումը, քանի որ անմիջականորեն հին նախատիպից զարգացման դեպքում z -ի փոխարեն կլիներ յ կամ չ: Դասական և կոտորակային թվականները գործնականում նույնական են պարսկերենի հետ:

12. Գալեշի բարբառում, ինչպես և գիլաներենի մյուս խոսվածքներում պահպանվել է ուղիղ և թեք հոլովների հակադրությունը, որը դրսենորվում է միայն եզակի 1-ին և 2-րդ դեմքերում: Անձնական բոլոր դերանունները 3-րդ դեմքում պատմականորեն հանգում են ցուցական դերանուններին:

Անձնական դերանունները փոխվում են ըստ հոլովների: Եզակի ու հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերն ունեն տարահիմք կազմություն:

Գալեշի բարբառում կարելի է առանձնացնել երկու կարգի հիմնական անձնական դերանուններ՝ ուղիղ և թեք: Թեք ձևերը բաղկացած են ուղիղ ձևից և թեք հոլովի՝ Յ Վերջավորությունից: Թեք ձևերի գործառույթներից են հատկացուցային կառույց կազմելը և համապատասխան նախադրությունների ու ետադրությունների հետ անուղղակի խնդիրներ կազմելը: Անձնական դերանունների ստացական ձևը կազմվում է համապատասխան դերանվանք՝ Յ Վերջածանցի հավելումով, իսկ արևելագիլանական խոսվածքներում ավելանում է՝ Յ Վերջածանցը: Ցուցական դերանունները հանդես են գալիս որպես պարզ և սաստկական տարբերակներ: Վերջիններս զալեշի բարբառում վկայված են և հնչյունի հետ սերտաճած: Բարբառում առկա են նաև փոխադարձ, հարցական, որոշյալ, անորոշ և ժմտական դերանունները:

13. Հոլովի կարգի վերացումը հանգեցրել է նախդրաետդիրային կազի լայն տարածմանը: Գալեշի բարբառում հիմնականում գործածական է հետդիրային բավական զարգացած համակարգը: Նախդիրները սակավաթիվ են և, որպես կանոն, հանդիպում են միայն պարսկերենից փոխառյալ կառույցներում:

14. Բայական համակարգը խնդրում է առարկա բարբառում գիլաներենի նման բավականին զարգացած է: Ժամանակային հակադրությունը, ինչպես մյուս իրանական լեզուներում, հիմնված է ներկա և անցյալ հիմքերի հակադրության վրա: Տարբերակվում է երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Որոշ ժամանակաձևերի մեջ կարևոր դեր են խաղում նաև եղանականից նախամասնիկները: Ըստ կազմության՝ տարբերակվում են պարզ, բարդ և նախածանցավոր կառույցներ, մեծ է բայական նախածանցների դերը: Պարսկերենի ազդեցությամբ ստեղծվել են նաև շարունակական ժամանակաձևեր:

15. Գալեշի բարբառում բայի կրավորական սեռը թե՛ կառուցվածքային և թե՛ գործառույթային առումով նույնական է պարսկերենի կրավորականի հետ: Սակայն հարկ է ավելացնել, որ այն, ինչպես գիլաներենում, հանդիպում է միայն երրորդ դեմքում: Կրավորականը կազմվում է հիմնական բայի անցյալի դերբայի և ուշ-կետը «դառնալ» սպասարկու բայի խոնարհված ձևերի հարադրմամբ: Անցյալ դերբայի գոյությունը կրավորականի կառույցում, ըստ երևույթին, պարսկերենի ազդեցության արդյունք է:

16. Գալեշի բարբառը բայերի անցյալի ու ներկայի հիմքերի միջև առկա տարբերությունները հիմնականում պահպանել է հենց նույն օրինաշա-

փությամբ, ինչպէս որ այն պահպանվել են իրանական լեզուների մեծ մասում։ Անցյալի բայահիմքի ձևերը ուղղակիորեն հանգում են իին իրանական \*-ta վերջածանցով կազմված անցյալի դերբային։

17. Ելնելով վերը նշված առանձնահատկություններից՝ կարելի է նշել, որ զալեշի բարբառը պահպանում է հարավարևմտյան իրանական բարբառներին բնորոշ մեծարթիվ հատկանիշներ, որոնք հավաստում են հարավարևմտյան իրանական բարբառախմբի զգալի ազդեցությունը խնդրո առարկա բարբառում։

Ատենախոսությանը կից՝ երկու հավելվածների տեսքով ներկայացվում են զալեշերեն -հայերեն ծավալուն բառարան և պատառիկներ դաշտային նյութերից։

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սաֆարի, Է., Ատրպատականի թյուրքական խոսվածքի և գիլաքի՝ թալիշերենի վրա ազդեցության պատճառների շուրջ, «Orinetalia», հու. VII-VIII, Երևան, 2008, էջ 34-38։

2. Սաֆարի, Է., Որոշ դիտարկումներ գիլաներենի Էշքեվարի բարբառի բայական բառակազմական նախածանցների շուրջ, «Orinetalia», հու. X, Երևան, 2010, էջ 76-78։

3. Սաֆարի, Է., Գիլաներենի Էշքեվարի բարբառի բայական դիմորոշ վերջավորությունները, «Orienetalia», հ. XI, Երևան, 2010, էջ 108-110։

4. Սաֆարի, Է., Հետդիրները զալեշի բարբառում, «Արևելագիտության հարցեր», հ. 7, Երևան, 2012, էջ 509-513։

**Эбрахим Сафари**  
**“Язык Галешей”**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 “ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ”

Защита состоится 2 декабря 2013г. в 15:00 часов, на заседании  
специализированного совета ВАК по лингвистике 019,  
действующего в Институте языка имени Гр. Ачаряна НАН РА  
(адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

**РЕЗЮМЕ**

Представленная диссертация посвящена историко-сравнительному и синхронному исследованию одного из диалектов гилянского языка, галеши. Работа основана на материалах, собранных во время полевых работ в селах дехестана Эшкеварат, района Рахимбад шахрестана Рудбар, находящихся в провинции Гилян в Иране. Надо отметить, что диалекты Гиляна до сих пор не были объектом всестороннего научного исследования и анализа. Данная работа — первая попытка выявить новые особенности в научной классификации гилянских диалектов, а также первое комплексное исследование языка галешей.

Во **Введении** определяется объект исследования и выдвигается спектр исследуемых вопросов. Вначале приводятся данные о географическом расположении и о самоидентификации галешей, как отдельная этно-социальная группа. Детально представлены сёла дехестана Эшкеварат, где и был собран основной полевой материал. Далее представлены классификация гилянских диалектов и место диалекта галеши в данной системе в сравнении с другими прикаспийскими языками и диалектами. Также показаны фонетические развития диалектов Гиляна, где на основе лексики переданы фонетические чередования. В результате анализа выяснилось, что соответствия с восточно-гилянскими диалектами в языке галешей более многочисленны. **Введение** включает основную лексику языка галешей. В последней главе представлена история изучения галеши, в которой отражены исследования, посвященные в основном глянским диалектам, в частности, западной подгруппы.

Первая глава – **Фонетика**, посвящена синхронному и диахронному анализу фонетической системы галеши, которая, несмотря на некоторые

исключения, во многом идентична с другими гилянскими диалектами. В результате полевых работ уточнены фонетические особенности галеши — 7 гласных (*i, e, a, ə, u, o, ə*) и 22 согласных (*b, p, f, g, k, x, h, y, d, t, j, ı, z, s, ʃ, ɬ, m, n, r, l, v, y*) и два дифтонга **ou** и **ey**.

В отдельном разделе система гласных проанализирована в соответствии с историко-сравнительным методом, а также представлены исторические соответствия, согласно которым в развитии системы гласных в гилянском выявлены два основных фактора влияния:

- 1) внутренние закономерности развития, которые отражены в качественных свойствах гласных, как основной фонетический признак, в результате процесса становления их приоритетными, слабеют различия гласных по долготе;
- 2) влияние персидского языка, которое более заметно в городах.

Во время внутреннего развития происходили следующие изменения:

- 1) согласно качественным свойствам различаются фонемы *\*a* *l̄i* *\*ə̄*. Сдвинувшись назад в средний или смешанный ряд, гласная *\*a* произносится с узким открытием рта, превращаясь в *ə̄*. Теряя долготу, *\*ə̄* превратилась в *\*a*.
- 2) ослабились фонетические значения фонем *ī* и *ū*, которые из ряда долгих гласных оказавшись в ряде со стабильными гласными, уподобились фонемам *i* и *u* во всех позициях. Надо отметить, что различие долготы звука исчезло и в унаследованных словах, и в заимствованиях.

Например, долгое *ī* > *i*, как *fil* “слон”, *bil* “лопата” и короткое *i* > *i*, как *dil* “сердце”. Долгое *ū* > *u*, как *tur* “муравей” и короткое *u* > *u*, как *pur* “полный”, а также *gul* “цветок” (*gul*) и *gul* “иллюзия” (*gūl*).

Во второй главе – **Морфология**, представлено исследование морфологии языка галешей, изучены следующие особенности грамматических категорий.

Имя существительное в языке галеши имеет следующие грамматические категории: число, прямой и косвенный падеж, неопределенный artikelъ. В галеши имя прилагательное ставиться перед существительным, что противоречит персидскому языку. Прилагательные бывают качественными и относительными, качественные прилагательные имеют три степени сравнения. Имя числительное, как и в персидском языке, различает количественное, порядковое, собирательное и дробное. Местоимения бывают личные, притяжательные, возвратные, вопросительные, определенные, неопределенные и отрицательные. В отдельной главе представлены предлоги и послелоги. Наречие изучено по адъективным и обстоятельственным характеристикам.

Более детально исследован глагол в галеши и его грамматические категории – род, вид, время, лицо, число. В языке галешей видовые и временные формы глагола образуются с помощью основ настоящего и прошедшего времени, которые рассмотрены в историческом развитии. Структурное изучение глагола показало наличие шести словообразовательных предлогов (var-/ va-, vâ-, dar-/ da-, fə- fu-, ha-, ia-), некоторые из которых в современном языке уже не эффективны и слились с глаголом. Вторая глава включает также общее междиалектное синтаксическое исследование.

Третья глава посвящена **Исторической фонетике**, где подвергнута анализу система согласных языка галеши. Как и во многих западно-иранских диалектах, важные особенности исторического развития языка галешей можно выявить именно в анализе системы согласных. Во многих случаях в системе гласных проявляются закономерности присущие всем западно-иранским диалектам, при этом, конечно, каждый со своими отдельными особенностями. По этому анализ исторического развития системы согласных для любого языка или диалекта северо-западной подгруппы является основным принципом определения его места среди западно-иранских языков.

В результате детального историко-сравнительного анализа системы согласных языка галеши стало очевидно, что, вопреки тому, что оно относится к северо-западной подгруппе иранских языков, одновременно, в нем сохранились многие характерные особенности южно-западных (персидских) иранских языков. В первую очередь это касается перехода \*-rd- > -l-, а так же и других чисто “персидских” фонетических развитий, которые свидетельствуют, что язык галешей, в том числе и другие “каспийские” диалекты сформировались на протяжении долгого времени в тесной взаимосвязи с южно-западными иранскими диалектами.

В **Послесловии** суммируются основные результаты диссертационной работы. В конце работы представлены словарь и приложение, на основе материалов собранных во время полевых работ.

**Ebrahim Safari**

**“The Language of the Galešis”**

A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06,

“The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages)”. The defense will take place on December 2, 2013 at 15:00 at the address 0015 Yerevan, Grigor Lusavorich St. 15 at the special session of the Academic Council (N 019 on Linguistics) of the Hrachia Acharian Institute of Linguistics.

**Summary**

The dissertation is dedicated to the synchronic and historical-comparative study of the Galeši language, one of the important dialects of Gilaki. The work is mainly based on the materials collected during the fieldwork in the villages of the Eshkevarat dehestan, in the region of Rahimabad of Rudbar shahrestan (Province of Gilan, Iran). So far the Galeši language has not been an object of comprehensive research and analysis. Thus, the current research can be considered the first attempt to reveal new peculiarities in the scientific classification of the dialects of Gilaki and the first complex study of the Galeši language.

In the **Foreword** the author defines the object of the study and presents the range of the questions under study. A brief outline of the location and self-identification of the Galešis as a separate ethno-social group is presented in the beginning. The villages of the Eshkevarat dehestan, where the main fieldwork materials have been collected, are described in details. Afterwards the author outlines the classification of the dialects of Gilaki and the place of the Galeši language in comparison with other Caspian languages and dialects. The phonetic developments of the dialects of Gilaki are also shown and exemplified in the phonetic alternation on the basis of the vocabulary. After the analyses it was clarified that the correspondences in the Galeši language with the East-Gilaki dialects were greater in number. The **Foreword** comprises the main vocabulary of the Galeši language. The history of the study of the Galeši language has been summarized in the last chapter, which mainly presents the researches dedicated to the Gilaki dialects and the Western subgroup in particular.

The first chapter – **Phonetics**, is dedicated to the synchronic and diachronic analyses of the phonetic system of the Galeši language, which despite some exceptions, is generally identical with other Gilaki dialects. After studying the fieldwork materials the phonetic peculiarities were clarified. The Galeši language has

7 vowels (*i, e, a, ă, u, o, ə*), 22 consonants (*b, p, f, g, k, x, h, y, d, t, j, ș, z, s, ș, ă, m, n, r, l, v, y*) and 2 diphthongs (**ou, ey**).

A separate chapter comprises a thorough historical-comparative analysis of the system of vowels. According to some historical correspondences that are presented in this chapter as well, two main factors of influence were defined during the development of the system of vowels in the Gilaki language:

1) Internal regularities of development, which are reflected in the qualitative features of the vowels, as a main phonetic criteria, when the latter gets prioritized in the result of this process, the differences of vowels are weakened in duration;

2) The influence of the Persian language, which is more obvious in the cities.

During the internal development the following changes were taking place:

1) According to the qualitative features the phonemes *a* and *\*ă* have been distinguished. Being pushed back to the middle or mixed row the vowel *\*ă* is pronounced with a narrow open mouth and is transformed into *ə*. Losing the duration, *\*ă* is transformed into *\*a*.

2) The phonetic meanings of the phonemes *ī* and *ū*, which from the row of the long vowels appearing in the row with constant vowels are turned into *i* and *u* in all positions. It must be noted that the differences of the sound length has disappeared both in inherited words and in borrowings.

For example, long *ī* > *i*, in *fil* “elephant”, *bil* “spade” and short *i* > *i*, in *dil* “heart”. Long *ū* > *u*, in *mur* “ant” and short *u* > *u*, in *pur* “full”, as well *gul* “flower” (*gul*) and *gul* “illusion” (*gūl*).

The second chapter – **Morphology**, examines the morphology of the Galeši language, and the following peculiarities of the grammar categories have been studied.

The noun in the Galeši language has grammatical categories of number, nominative and oblique case, indefinite article. The adjective is put before the noun, which contradicts the rule in the Persian language. Adjectives can be qualitative and relative; the qualitative adjectives have three degrees of comparison. The numerals, like in Persian language, can be cardinal, ordinal, collective and fractional. There are personal, possessive, reflexive, interrogative, definite, indefinite and negative pronouns in the Galeši language. The prepositions and postpositions are included in a separate chapter. The adverb is studied with all its features.

The verb in the Galeši language is presented thoroughly with all its grammatical categories: gender, aspect, time, person, number. The aspectual and time distinctions of the verb are constructed with the help of present and past stems,

which also are studied in the historical progress. The structural analysis of the verb showed that there are six word-formative prepositions (var-/ va-, vâ-, dar-/ da-, fə-fu-, ha-, ia-), some of which are not productive in the modern language and have been merged with the verb.

The second chapter also comprises a general inter-dialectal syntactical research.

The third chapter is dedicated to the **Historical Phonetics**, where the consonant system of the Galeši language has been thoroughly analysed. Many important peculiarities of the historical development of the Galeši language can be defined just after a full analysis of the consonant system, which is completely true for other West-Iranian dialects. In many cases the system of vowels shows regularities similar to all West-Iranian dialects, surely, each one with its own specific features. That is why the analysis of the historical development of the consonant system is the basis for defining the place of a language or a dialect among other West-Iranian languages.

A detailed historical-comparative analysis of the consonant system has proved that despite its attribution to the North-Western subgroup of the Iranian languages, simultaneously, it has preserved many specific peculiarities distinctive for the South-Western Iranian (Persian) languages. Primarily, this concerns the transition of \*-rd-> -l- and other pure “Persian” phonetic developments, which attest that the Galeši language, along with other “Caspian” dialects, has been formed in tight interrelations with South-Western Iranian languages during a long period of time.

In the final section of the thesis – in the **Afterword**, the author summarizes the results of the work obtained during a thorough investigation of the Galeši language. In the end of the work a vocabulary and a full appendix are comprised on the basis of the fieldwork materials.